Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ձևավորող գնահատման կիրառման արդյունավետությունը հայոց լեզվի դասերին, գնահատման գործիքներ

Կատարող՝ Արուսյակ Ռումելյան

Դպրոց՝ Այնթապի թիվ 2 միջն դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Նախաբան…….….3

Գրականության ակնարկ……7

Հետազոտական ընթացք……....11

Տվյալների մշակում և վերլուծություն…….…….15

Ամփոփում……17

Գրականության ցանկ……..…19

Նախաբան

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական և անփոփոխ ճշմարտություն, այսօր միայն հարաբերական է կամ նույինսկ ամբողջությամբ՝ սխալ: Սակայն մկիայն տեխնոլոգիաների և գիտության շնորհիվ չէ, որ փոփոխվում է աշխարհը:

Հայաստանը լիովին ինտեգրվել է համընդհանուր գլոբալ փոփոխություններին, որոնք ընդգրկում են և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ կրթական ողջ համակարգը:

Հայաստանի դպրոցներն ու ուսուցիրչներն, ինչպես իրենց գործընկերների մեծամասնությունը տարբեր երկրներում, այսօր առընչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Պետական չափորոշչի համաձայն կրթությունը հանրակրթության ներսում ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժական և հոգեբանական աշխատանքները, բարոյական, մշակութայնի, ազգային և համամարդկային արժեքները: Նրա բաղադրիչներն են՝

- Գիտելիքի համակարգ
- Արժեքային համակարգ
- Կարողություններ ու հմտություններ

Ուսուցման **նպատակն** է, որ մարդը սովորի, ձեռք բերի գիտելիքներ, կարողանա կիրառել և հարստացնել դրանք: Եթե աշակերտը սովորում է, նա ավելի շատ է իմանում և ավելի շատ բան է կարողանում անել:

Գնահատումը (ստուգումը) կարևոր է, որովհետև այն տեղեկություններ է հաղորդում աշակերտների ձեռքբերումների և ուսուցման արդյունավետության մասին:

Գնահատումը սովորելու և սովորեցնելու անբաժանելի մասն է կազմում:



Սակայն հարց է առաջանում.

1. Ինչու՞ ենք գնահատում

ա) **գնահատական դնելու համար** (սա մենք գիտենք և կարող ենք կագտարել շատ լավ),

բ) **ուսուցումը խթանելու համար** (սա այն է, ինչը պետք է սովորենք), այսինքն գնահատումը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

2. Ի՞նչն ենք գնահատում- **արդյունքները, գործընթացը**

Գնհատվում է ոչ միայն սովորողի աշխատանքի արդյունքը, այլև արդյունքին հասնելու գործընթացում կիրառված հմտությունները:

3. Ո՞վ է գնահատում-**Ուսուցիչը, սովորողը՝** ինքն իրեն, **նաև խումբը**, եթե համագործակցային ուսուցում է:

Գնահատում է ուսուցիչը, բայց այդ գնահատականը կարող է աշակերտի համար լինել ոչ ճշգրիտ, եթե նա չսովորի գնահատել ինքն իրեն:

Օբյեկտիվ ինքնագնահատումը ինքնաճանաչման լավագույն գրավականն է:

4. Ինչպե՞ս եք գնահատում:- **Գնահատականով, հետադարձ կապով:**

Ստեղծվել են միավորներով գնահատելու նոր ձևեր: Սոցիալական հմտությունների գնահատման համար կիրառելի են նաև ուսուցչի և կամ սովորողների կողմից մշակված գնահատման սանդղակները: Համագործակցային ուսուցման մեջ ավելի կարևոր դեր ունի հետադարձ կապի ապահովումը:

5. Ե՞րբ ենք գնահատում:-**Սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո:**

Աշակերտը պետք է նախապես իմանա՝ ինչ է ակնկալվում իրենից, և ինքն ինչ պիտի անի լավ արդյունքի հասնելու համար:

6. Ո՞վ պետք է պլանավորի գնահատումը- **ուսուցիչը և կամ աշակերտը:**

Անհարաժեշտ է սովորողներին ներգրավել գնահատման պլանավորման մեջ՝ սովորեցնելով մշակել գնահատման չափանիշներ (սանդղակ):

Այսպիսով, գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման հիմնական սկզբունքներն են՝

- Արդարությունը,
- Հուսալիությունը,
- Անկողմնակալությունը,
- Հավաստիությունը,
- Հիմնավորվածությունը,
- Մատչելությունը,
- Թափանցիկությունը:

Ըստ ամերիկացի գիտնական Բենջամին Բլումի ներքոհիշյալ դասակարգումը կարելի է դիտել որպես գնահատման հիմնաքար: Բենջամին Բլումն առանձնացնում է 6 բաղադրիչ.

1. Գիտելիք
2. Ընկալում
3. Կիրառում
4. Վերլուծում
5. Համադրում
6. Գնահատում կամ արժևորում

Ըստ այդ ամենի՝ սովորողը կարողանում է նկարագրել, բացատրել, մեկնաբանել, հիմնավորել, ամփոփել, գնահատական տալ: Ըստ իմ հետազոտական աշխատանքի նպատակի՝ աշակերտներիս պետք է ուղղորդեմ կազմել այնպիսի առաջադրանքներ, որտեղ կպահանջվի ճշգրտել, հիմնավորել, քննարկել, փաստարկներ բերել և գնահատել իրենք իրենց ընկերներին:

Սովորեղների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է 2 իրար փոխլրացնող ձևերից՝ ա) ձևավորող գնահատում, բ) ամփոփիչ միավորային գնահատում:

Ձևավորող գնահատումը տեղեկատվություն հավաքելու անընդհատ գործընթաց է ուսուցման ընթացիկ, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որն օգնում է ուսուցչին վերանայել դասընթացի պլանավորումը և իր կարծիքն է հայտնում սովորողի առաջադիմության մասին: Երբեմն ձևավորող գնահատումը կիրառվում է լայն իմաստով՝ ներառելով հարցաթերթիկներից և խորհրդատվություններից քաղված քանակական առումով չփոփոխվող տեղեկատվությունը:

Ձևավորող գնահատման ուժեղ կողմն այն է, որ նպաստում է ուսուցման բարելավմանը, իսկ թույլ կողմն այն է, որ կախված է պատասխան արձագանքիբնույթից:

Իմ հետազոտության նպատակն այն է, որ կարողանամ բացահայտել ձևավորող գնահատականի ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա՝ նշելով և՛ հաջողությունները և՛ թերացումները:

Գրականության ակնարկ

Ըստ Ջնոֆ Փեթթի՝ ձևավորող գնահատումը սովորողներին տրվող տեղեկատվական հետադարձ կապն է այն ժամանակ, երբ նրանք դեռ սովորում են նյութը, որպեսզի գնահատումն իսկապես ձևավորող լինի, տեղեկատվությունը սովորողի կողմից պետքէ կիրառվի բարելավման նպատակով:



- Ձևավորող գնահատման ձևերն ու միջոցներն են՝
- Բանավոր հարցում
- Տնային աշխատանք

- Հայտորոշիչ թեստ
- Քննարկում
- Հետադարձ գնահատում (ինքնագնահատում)
- Համագործակցային աշխատանք
- Գործական աշխատանք (պատի թերթ, քարտային աշխատանք և այլն):

Գնահատման դերը թերությունների հայտորոշումն է, շտկում պահանջող թիրախները որոշելը, շտկումների իրականացնելը և նորից ստուգելը: Գնահատումը կարող է ոգեշնչել, քաջալերել և ապահովել հետադարձ կապ, որն էական է արագ շտկող աջակցությունը թիրախավորելու համար: Շտկման վրա ծախսող ժամանակից ու ջանքերից է ուսումնառության որակը:

Գնահատման ձևանմուշները, յուրացման թեստերը ,ինքնափոխադարձ և նմուշային գնահատումը, հայտորոշիչ հարցադրումը առաջընթացը խթանելու արդյունավետ ռազմավարություններն են: Գնահատումը դիտարկվում է որպես հիմնախնդիր: Դասարանում ուսուցչի ցանկացած գործողություն կարող է ձևավորող դառնալ: Ուսուցիչների համար գնահատման հիմանական կիրառվող ձևն ընթացիկ կամ ձևավորող գնահատումն է, սակայն որոշակի վերապահությամբ: Աշակերտի համար շատ կարևոր է սեփական հաջողությունների գիտակցումը և ուսուցչի կողմից դրանք փաստելը: Ձևավորող գնահատումը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով՝

Այսպիսով ձևավորող գնահատումը ուսումն ական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա:

Ձևավորող գնահատումը իրականացնելիս անհրաժեշտ է վերհանել սովորողների կարիքները.

1. Յուրացրե՞լ են թեման, թե՞ ոչ:
2. Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:
3. Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:
4. Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման և դասավանդման մեթոդիկայում:

Ձևավորող գնահատման գործիքները բազմազան են, և ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային և հետևողականորեն: Կարելի է սկսել ձևավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներիվ:

1. **Արդյունավետ սկիզբ և ավարտ**. Օգտագործելառաջին և վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ հարցաշար:
2. **Նվազ ազդեցություն ունեցող թեստեր**. Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս և օգնում է լավ հասկանալսովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների և գաղափարների յուրացումը:
3. **«Մեծ եղբայրդ հետևում է քեզ».** Ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում՝
    - Ընկերոջդ նամակ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները:
    - Նկարի՛ր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման:
    - Մտածի՛ր նյութի շուրջ և հետո քննարկի՛ր ընկերոջդ հետ:
4. **Ձևաչափը՝ հարցազրույց**. Որպեսզի սովորողներն ավելի խորանան ուսումնասիրվող թեմայի մեջ, կարելի է օգնագործել հարցազրույցի, բանավեճի և քննարկման ձևաչափերը: Կազմակերպել 3 րոպեանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ:
5. **Արվեստ**. Այն միջոցները, որոնք նախատեսում դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, նույն պես կարող են ձևավորող գնահատման գործիքներ դառնալ: Սովորողները կարող են նկարել, կոլաժներ և քանդակներ ստեղծել, ինչը նրանց հնարավորություն կտա միավորել անցած նյութը մեկ ամբողջության մեջ:

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 7-րդ դասարաի Հայոց լեզու առարկան: Որպեսզի ձևավորող գնահատականը ծառայի իր նպատակին արդյունավետ ընտրել եմ ուսուցման խմբային տարբերակ՝ ձևավորելով խառը խմբեր: Խմբերից միայն մեկում կա թույլ մոտիվացիայով աշակերտ:

Հետազոտական աշխատանքիս թեման ածականի մակդիրային կիրառության ուսումնասիրությունն է:

Դրված է նպատակ՝ ածականի կիրառությունը գեղարվեստական խոսքում՝

ա. որպես պատկերավորման միջոցի, բառապաշարի հարստացում

բ. բնագրում ածականի մակդիրային կիրառությունը ճանաչելու, վերլուծելու, սեփական խոսքում բառի ճիշտ, դիպուկ ընտրություն կատարելու ստեղծագործական կարողությունների ձևավորում

գ. Գեղագիտական ճաշակի, պատկերավոր մտածողության ձևավորում

Որպես ուսումնական նյութեր ընտրել ում Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի…», Հ. Սահյանի «Անտառում», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» (հատված), Հ. Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունները:

Ինչպես նշվեց, հիմնական մեթոդը՝ խմբային հետազոտությունն է և զրույց-դասախոսությունը:

Աշակերտը պետք է կարողանա ճիշտ և գրագետ կառուցել խոսքը, բառերբ ու բառակապակցությունները, կարողանա հիմնավորել արտահայտած մտքերն ու վերլուծել դրանք, շարադրել խոսքը՝ թույլ տալով ոճական հնարավորինս քիչ սխալներ:

Հետազոտական ընթացք

Նախապես դասարանի ուշադրությունը հրավիրելով մի քանի նախադասություններում ընդգծված ածականների վրա առաջարկում եմ մեկնաբանել դրանց իմաստը:

Այսպես.

1. Ամփոփված **դառը** մտքերի մեջ՝ Սաթենիկը չնկատեց իրեն մոտեցող ընկերուհուն
2. **Վարդաբույր** Նազիաթը մոտեցավ բանաստեղծին և **քնքուշ** ձայնով ողջունեց
3. Բարձունքից նայելիս քո առջև բացվում է **սևաերախ** անդունդ

Ընդգծված ածականները իրենց լրացյալների հետ վերցնելով՝ սովորողներին բացատրում եմ, որ գեղարվեստական խոսքում ածականները կարող են կատարել արտահայտչական, ոճական հատուկ դեր, կարող են դառնալ պատկերավորման միջոց՝ մակդիր:

Կարճ դասախոսությամբ բացատրում եմ, թե ինչ է մակդիրը, որ մակդիր-ածականը ունի լրացուցիչ արտահայտչական, հուզական երանգ. բնութագրող է գնահատող, արտահայտում է հեղինակի վերաբերմունքը:

Ամեն մի դպուկ մակդիր ինքնին մի պատկեր է: Պետք է հիշաե, սակայն, որ մակդիրի կիրառությունը կապված է հոգեբանության, հերոսների արարքների հետ: Մակդիրն իր իմաստով պետք է համահուչ լինի պատկերվող անցուդարձին և դառնա նաև ահամապատասխան տրամադրություն արտահայտելու միջոց:

Դիպուկ ընտրված մակդիրները խոսուն են, համահուչ են թեմային, նկարագրությանը և հոգեբանորեն պատճառաբանված են:

Այս համառոտ բացատրությունից հետո նշում են օրինակներ անցած նյութերից:

Այնուհետև աշակերտներին բաժանում եմ 3-4 հոգանոց խմբերի և յուրաքնչյուրին հանձնարարում վերևում նշված ուսումնական նյութերը, ամեն խմբին՝ մեկ

ստեղծագործություն: Աշակերտները խմբով պիտի հետազոտեն, առանձնացնեն տրված ստեղծագործությունների մեջ գարծածված մակդիրները:

Առաջին խումբը աշխատում է Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վրա: Երկրորդ խումբը՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» (հատվածի): Երրորդ խումբը՝ Հ. Սահյանի «Անտառում» բանաստեղծության: Չորրորդ խումբ՝ Հ. Շիրազ «Թագադրում»:

Քանի որ աշակերտները գրականության ժամին անցել են և լավ ծանոթ են բանաստեղծությանը, նրանց համար դժվար չի եղել անդրադառնալ և խորացնել իրենց գիտելիքները լեզվական առումով, բառի գեղագիտական կիրառությունն ու արժեքը մեկ անգամ ևս զգալու, սովորելու իմաստով:

Մակդիրների դերը ցույց տալուց առաջ պետք է ներկայացնել բանաստեղծության մեջ իշխող տրամադրությունը, որպեսզի տեսնեն՝ համահունչ են մակդիրները բանաստեղծության ոգու, և ստեղծում են նման տրամադրություն:

Աշակերտներն առանձնացրել են բառակապակցությունները՝ մակդիրները իրենց լրացյալներով, **արևահամ բառ, ողբանվագ, լացակումած լար, արնանման վարդեր ու ծաղիկներ, հեզաճկուն պար, երկաթագիր գրքեր, անհյուրընկալ պատեր** և այլն:

Բանաստեղծության ամեն մի մակդիր, ամեն մի տող ունի հոգեբանական ու ճանաչողական իմաստ: Մակդիրներն այքան խոսուն են, այնքան հարուստ, որ իրենց մեջ կրում են դարերի պատմություն. մեր առջև հառնում է Հայաստանի պատկերը՝ իր տխուր ճակատագրով, իր քաղցր, արևահամ բառ ու բանով, իր հոգևոր գանձերով:

Խոսուն և արտահայտիչ մակդիրների օրինակ է տալիս նաև Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը, որը ներկայացնում է երկրորդ խումբը: Գեղարվեստական հզոր լիցք ունեցող մակդիրները վեհություն ու հանդիսավորություն են հաղորդում խոսքին:

Օրինակ՝ երբ զայրացած Շամիրամը սպառնում է ջախջախել մեր երկիրը,, Զարյանը գործածել է «բարձրաքիթ » հետաքրքիր մակդիրը:

«Բարձրաքիթ» մակդիրը բնութագրական նշանակություն ունի. հայոց լեռները խորհրդանշում են հայ ժողովրդի մարտական ոգին, նրա հպարտությունը, վեհությունը: Այդ ոգին ճանաչում է նաև «քինախնդիր» թշնամին:

Մի այլ դպքում, երբ Արան սթափվում է Շամիրամի խաբուսիկ դյութանքից, Զարյանն այդ պահի համար օգտագործում է «դյութական» մակդիրը: Երկու տարբեր աշխարհներ են բնութագրում «Արա Գեղեցիկ»-ում Շամիրամի պատգամավորի պատասխանը. բռնության ու խաղաղ աշխատանքի երկու հակադիր աշխարհներ:

Մի **բիրտ** քարի նման,
Որ շպրտում են **ջինջ** աղբյուրը:

Այսպես հեթով բացատրվում են մակդիրով բառակապակցությունները. բարկափայլ սուր, հացապարտ հոգի, բազմափորձ խորհուրդ, հայրենամիղծ լեզու, սրտանվեր ողջույն, սրբանվեր ավանդ, բարձրաբերձ Ուրարտու, կանացի հպարտության աղամադյա կեղև, մաքուր ու բարձ հոգի, ձյունաճերմակ ամպ, և այլն, և այլն:

Շատ են ու ինքնատիպ բնութագրական մակդիրները, դրանք նպաստում են ոչ միայն ստեղծագործության լեզվի պատկերավորությանն ու արտահայտչականությանը, այլև օգնում են աշակերտներին, որ գեղարվեստական մտածողության տարբեր ձևերով կարողանան արտահայտել իրենց խոհերը, զգացմունքներն ու հույզերը, գաղափարները: Այս հարցերի խորը վերլուծությամբ օգնում եմ աշակերտներին՝ գեղարվեստական ստեղծագործությունը գեղարվեստորեն ընկալելու, հոգևոր սնունդ ստանալու, արժևորելու, գնահատելու կարևորություններ ձևավորելու գործում: Նույն ձևով իրենց հետազոտական արդյունքներն են ներկայացնում նաև երրորդ և չորրորդ խմբերը:

Աշակերտներն պետք է կարողանան երկն ընթերցելիս ուշադրություն դարձնել, որոնել, գտնել լեզվական միջոցների ու բառերի դերը, մեկնաբանել դարձվածքներն ու թևավոր արտահայտությունները: Դա մեծապես կնպաստի գեղարվեստական ճաշակի զարգացմանը և ոճի միօրինակության հաղթահարմանը:

Իմաստի ընկալման փուլում ուշադրություն եմ դարձնում յուրաքանչյուր խմբին տրված առաջադրանքի, շարադրման ընթացքին, գեղեցիկ և գրագետ խոսքին և ներկայացնելու կարողություններին: Աշակերտներին ինձ հետ մասնակցում են իրենց ուղղելու, շտկելու թերացումներին: Նրանք նշում են նաև յան բոլոր տեղեկատվական միջոցները, որոնցից օգտվել են: Խմբում կային աշակերտներ, որոնք թերացել էին իրենց ըրված հաբձնարաությունը կատարելիս: Փորձում եմ գտնել պատճառը, որ ինքն ւրեն

գնահատական տա, բացատրի այն թույլ կողմերը, որոնց հետ կապված դեռևս անելիքներ կան:

Կշռադատման փուլում բացահայտում եմ խմբի յուրաքանչյուր աշխատանքի արդյունքները, որի համար գնահատում եմ՝ լավ, միջին, վատ:

Խմբերի բոլոր հարցադրումներին անդրադառնալուց հետո կատարվում է ձևավորող գնահատումը, որի միջոցով շտկվում են և անդրադարձ արվում թերացումներին:

Խթանման փուլում աշակերտները միմյանց հարցնում են առանձնացված մակդիրները և խոսքը ավելի գեղեցիկ են կառուցում: Դրանից հետո նրանք փորձում են իրար գնահատել. գնահատումը դառնում է փոխադարձ, որից հետո աշակերտները ներկայացնում են թույլ և ուժեղ կողմերը: Այս ամենի արդյունքում մենք տեսնում ենք ձևավորող գնահատման նպատակը, որը ստուգում է աշակերտի կողմից ժամանակի որոշակի հատվածում կոնկրետ նյութի յուրացման աստիճանը և բարելավում ուսուցումը:

Տվյալների մշակում և վերլուծություն

«Ձևավորող գնահատում: Հետադաս կապի ուժը» հետազոտական աշխատանքիս թեման ունի իր վերլուծական առանձնահատկությունները:

- Ձևավորվող գնահատականը ունի հատուկ նպատակ ստուգել աշակերտի կողմից ժամանակի որոշակի հատվածում կոնկրետ նյութի յուրացման աստիճանը և բարելավել ուսուցումը:
- Ձևավորող գնահատումը կոչվում է նաև «յուրացման գնահատում»:
- Այս գնահատման արդյունքները ես օգտագործում եմ սովորողի թույլ կողմերը որոշելու նպատակով, որպեսզի դրանք վերացվեն և սովորելու հետագա ընթացքը բարելավվի: Եթե այս արդյունքները օգտագործվեն ուսումնական ծրագրի արդյունավետությունը գնահատելու նպատակով, ապա այն կկատարելագործվի հետագայում:

1-ին դասի ժամանակ կազմակերպվեց հարցադրումներով խմբային աշխատանք, որտեղ հատուկ ուշադրություն դարձվեց թույլ մոտիվացիա ունեցող աշակերտին: Այս դասաժամի վերլուծումները, քննարկումներն ավարտելուց հետո ես ուղղորդում եմ աշակերտներիս հիմնավորել ձևավորող գնահատականը ընթացքում:

2-րդ դասաժամի ավարտից հետո ես հասկացա, որ ունեմ անելիքներ, որովհետև 7-րդ դասարանում ուսուցիչը աշակերտներին պետք է ուղղորդի ճիշտ և գեղեցիկ խոսքի կառուցմանը: Դա արվում է հետադարձ կապի միջոցով, որտեղ բացահայտվում է նրանց ուժեղ և թույլ կողմերը:

3-րդ դասի ընթացքում աշակերտները ինձ հետ մասնակցում են իրենց ուղղելու, շտկելու թերացումներին:

Աշակերտները նշում էին այն բոլոր տեղեկատվական միջոցները, որոնցով աշխատել էին: Թույլ ընկերներին օգնելուց հետո և սեփական սխալները ուղղելուց հետո նրանք հիմանվորում են փոխադարձ գնահատականները և ինքնագնահատականը:

4-րդ դասի ժամանակ բացահայտվում է աշակերտների բոլոր թույլ և ուժեղ կողմերը, որի արդյունքում մենք տեսնում ենք ձևավորող գնահատման նպատակը: Աշակերտներն իմ օգնությամբ կատարեցին հետաքրքիր և բովանդակալից

աշխատանքներ՝ թևավոր խոսքեր, շարադրություն, գրեցին թեստեր, բանավոր հարցումներ և տնային աշխատանքներ:

Ամփոփում

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ձևավորող գնահատման կիրառումը ուսումնասիրությունը բարելավելու նպատակով չափազանց աշխատատար է և արդյունքներն անմիջապես հնարավոր չէ գնահատել, սակայն փորձը ցույց է տալիս, որ հայտորոշման և շտկման ամենօրյա հետևողական աշխատանքները կիրառելու դեպքում աշակերտները ձեռք են բերում աշխարհաճանաչողական հմտություններ և դասավանդման օբյեկտից վերափոխվում են ուսումնասիրության սուբյեկտի՝ ձեռք բերելով աջակցող դերակատարում:

Ըստ իս՝ Ձևավորող գնահատականը ունի հատուկ նպատակ.

1. Որոշել աշակերտների թույլ կողմերը, որպեսզի դրանք վերացվեն և ուսումնասիրության հետագա ընթացքը ավելի նպատակային և հետաքրքիր լինի:Վերջիններս կկարողանան կատարել ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, կճանաչեն իրենց և թիմի մյուս անդամների հնարավորությունները, հմտություններն ու գիտելիքները:
2. Ստուգել աշակերտի կողմից ժամանակի որոշակի հատվածում կոնկրետնյութի յուրացման աստիճանը և բարելավել ուսուցումը:
3. Ձևավորվող գնահատականի միջոցով աշակերտներն ավելի կոգևորվեն, կակտիվանան, կսկսեն ավելի ոգևորված ուսումնասիրել նյութն ու ամբողջովին կներգրավվեն դասապրոցեսին:
4. Իմ կարծիքով դրական, ոգևորող վերաբերմունքից խմբերի ներսում կձևավորվի մտերմիկ մթնոլորտ, աշակերտներն ավելի սիրով կընկալեն նյութը և կսովորեցնեն խմբի մյուս անդամներին՝ապահովելով նյութի բազմակողմանի ուսումնասիրություն, դրական, բարձր տրամադրություն, որն էլ պատճառ կդառնա դասի՝ ավելի հետաքրքիր և նպատակային անցկացմանը:

Ավարտելով հետազոտական աշխատանքս՝ ես եկա այն եզրակացության, որ ցանկացած աշխատանքում պետք է որդեգրել ձևավորող մոտեցում, հայտորոշել դժվարությունները և բարելավման հմտությունները՝ պահանջելով, որ սովորողը աշխատի դրանց վրա, իսկ հետո արձագանքի յուրաքանչյուր տեսակի բարելավումը:

Փորձս ցույց տվեց, որ աշակերտները բավականին անաչառ են ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ժամանակ, համեմատաբար ավելի ակտիվ են, անկաշկանդ, դրսևորում են վերլուծական մտածողություն, մոտիվացիան ուղղված է ոչ թե միավորին, այլ գիտելիքի ձեռքբերմանը:

Վերջում հավելեմ, որ իմ հետազոտական աշխատանքի գիտական հավաստիության աստիճանը չի կարող շատ բարձր լինել, քանի որ կատարվել է շատ կարճ ժամանակահատվածում: Կարծում եմ, որ ուսումնասիրությունս պիտի շարունակեմ՝ ավելի հավաստի փաստեր ունենալու և կրթության ոլորտում իմ հմտություններն ու կարողությունները զարգացնելու ուղղությամբ:

Գրականության ցանկ

1. Բենջամին Բլումի - «Ուսուցման արդյունավետ հնարները»,
2. Ջեոֆ Փեթթի - « Գնահատումը»,
3. Ս. Խաչատրյան-Ուսուցման արդյունավետ հնաներ/ Ֆրիդրիխ Էբբերտ հիմնադրամ, Հայաստան 2020,
4. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան-Համագործակցային ուսուցում, Եր. Անտարես 2006,
5. https://kznakgnahatum.blogspot.com/p/5.html